600.0200.29.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2016 թվականի №200Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի №143Ա ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի №129Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 75-րդ հոդվածը և հաշվի առնելով «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հունիսի 13-ի №19 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2013 թվականի փետրվարի 20-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Խաչի Քար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №47Ա որոշումը,
   2) 2013 թվականի նոյեմբերի 29-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախազգուշացնելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» №422Ա որոշումը,

3) 2014 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 20-ի №47Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №6Ա որոշումը,

4) 2014 թվականի հունիսի 11-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախազգուշացնելու մասին» №162Ա որոշումը,

5) 2015 թվականի մայիսի 27-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №143Ա որոշման 1-ին կետի 110-րդ ենթակետը,

6) 2015 թվականի հուլիսի 22-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Խաչի Քար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0487 լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին» №255Ա որոշումը,

7) 2015 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 22-ի №255Ա որոշման բողոքարկման վարույթը կասեցնելու մասին» №347Ա որոշումը,

8) 2016 թվականի մարտի 9-ի «ԲԻԷՍԲԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը մերժելու մասին» №44Ա որոշումը:

2. 2016 թվականի մայիսի 25-ից չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 25-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №129Ա որոշման 1-ին կետի 108-րդ ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 հունիսի 2016թ.
ժամը 16[00]